ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-7/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 10-ը մայիսի 2021թ.
Ժամը 14[30]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ, Ա. Ասատրյան /ԳԱՊ/,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Գ. Ռուստյան,
ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիքալվացարարային ապահովման բաժանմունքի ավագ ինժեներ, մայոր Մ. Երամյան:
Բացակայում է՝ ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության իրային գույքի պլանավորման և ապահովման բաժնի սպա, կապիտան Ա. Համբարձումյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Տերյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆ-ԳՀԾՁԲ-21-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ. Տերյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-7/4» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ
2	«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ. Տերյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ ներկայացրած հայտում բացակայում է հրավերով նախատեսված Հավելված 1.1-ը:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ հայտի Հավելված 1.1-ում բացակայում է կնքվելիք պայմանագրում ներառվող ծառայության մատուցման ընթացքում օգտագործվելիք նյութերի ցանկը աղյուսակով:
Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 10.05.2021թ. ծանուցել «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ սույն ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում

մասնակիցը չի շտկել անհամապատասխանությունը, ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ կնքվող պայմանագրերով չեն նախատեսվում գումարի փոխհատուցման հնարավորության պայմանները և նիստը շարունակվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Տերյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 2 մասնակից.

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Նախահաշվ. գումարը	Ընտրված կազմակերպության			Մրցույթին մասնակցող կազմակերպությունների		
					անվանումը	գինը		անվանումները	գինը	
						առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Դերձակի ծառայություններ /Ներքնակ (185x65x7.0)սմ/	հատ	3000	9000000				«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	3367500	4041000
2	Դերձակի ծառայություններ /Կոստյում կիսաբրդյա կտորից, տոնական (անհատական պատվեր)/	լ-կ	15	525000				«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ	437475	524970
3	Դերձակի ծառայություններ /Կոստյում կիսաբրդյա կտորից, ամենօրյա (անհատական պատվեր)/	լ-կ	30	1050000				«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ	874950	1049940
4	Դերձակի ծառայություններ /Կոստյում բամբակյա կեպիով (կարի վճարովի ծառայություն)/	լ-կ	39	272844				«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ	227370	272844

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-7/4» ծածկագրով ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժիններին մասնակցել է մեկ մասնակից, որի հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին, գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, գների նվազեցման նպատակով 13.05.2021թ. բավարար գնահատված և վերոնշյալ չափաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին ծանուցվել է 20.05.2021թ բանակցությունների վարման վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակիցները չեն ներկայացել բանակցություններին և առաջարկված գները թողել են անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-7/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Գ. Տերյան)

4.1 25.05.2021թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «**ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-7/4**» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ, 2-րդ, 3-րդ, 4-րդ չափաբաժիններով՝ «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ և վերջիններիս, անգործության ժամկետի ավարտից հետո, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

4.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել « ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-7/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Գ. Տերյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-7/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Ա. Ասատրյան

Գնահատող Գ. Ուխտյան

Գնահատող Մ. Երամյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան